



ՄՏԱԽՕՍԻՆ ՄԱՐԴ ՉԻ ՀԱԽՏԱՐ

Ստախոս մարդ մը կ'ապրեր հեռո՛ւ գիւղի մը մէջ: Օր մը ան կ'որոշէ բլուրի մը գագաթը ելլել եւ կատակելով գիւղացիները վախցնել:

Ան կը բարձրանայ բլուրին գագաթը եւ ամբողջ ուժով կը գոռայ.

- Օգնութի՛ն, օգնութի՛ն, առի՛ծ, ազատեցէ՛ք զիս:

Խեղճ գիւղացիները հաւատալով մարդուն օգնութեան կանչող խօսքերուն, իրենց գործերը կը ձգեն եւ օգնութեան կը փութան: Սակայն երբ կը հասնին բլուրին մօտ, կը տեսնեն որ ո՛չ առիծ կայ, ո՛չ ուրիշ բան:

Ստախոս մարդը կը խնդայ ու կ'ըսէ.

- Խաբեցի՛ ձեզ, հա՛, հա՛, հա՛...

Գիւղացիները սաստիկ կը բարկանան եւ կը նեղանան, կը վերադառնան իրենց գործերուն, զորս անոր պատճառով կիսատ մնացած էին:

Քանի մը օր չանցած, այս մարդը դարձեալ կը բարձրանայ բլուրին գագաթը եւ ամբողջ ուժով կը պոռայ.

- Առի՛ծ, առի՛ծ, օգնեցէ՛ք, առիծը պիտի ուտէ զիս:

Խեղճ գիւղացիները իրենց աշխատանքը մէկդի ձգելով դարձեալ կը փութան մարդուն օգնութեան, սակայն անոնց բարկութիւնը մեծ կ'ըլլայ երբ կը տեսնեն, որ կրկին խաբուած են: Այս անգամ կ'որոշեն չհաւատալ անոր:

Դժբախտաբար, օր մը մարդը իրաւ առիծի մը կը հանդիպի: Ան ամբողջ ուժով կը գոռայ.

- Օգնութի՛ն, օգնութի՛ն:

Սակայն գիւղացիները կը կարծեն, որ ստախոս մարդուն ջրածը կատակ է եւ ոչ մէկը օգնութեան կը փութայ:

Առիծը կը յարձակի ստախոս մարդուն վրայ եւ կը սպանէ զինք:

Այս պատմութենէն կը հասկնանք, որ ՄՏԱԽՕՍԻՆ ՄԱՐԴ ՉԻ ՀԱԽՏԱՐ:

Օգնութի՛ն,
օգնութի՛ն



ԹԻՒՆ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՄԱՐՄԻՆԻ ԱՇԽԵՆԻ-ՇԱՀԻՆԻ
ՆԿԱՐԱԶԱՐՈՒՅԵՑ՝ ՈՍԵՔԻ ԲԵՐՈՇԵՆՆ

Կրնա՞ս լուծել:

$$\triangle + \triangle + \triangle = 21$$

$$\triangle = \underline{\quad}$$

$$\triangle + \bullet = 21$$

$$\bullet = \underline{\quad}$$

Պատասխաններ: 7, 14



Գունաւորե՛ հետեւեալ պատկերը:



ԳԻՏԵ՞Ս, ԹԵ...

- * Սարդերը իրենց ոտքերով կը լսեն:
- * Ընծուղտը իր քիթը լեզուովը կրնայ մաքրել:
- * Սիպերիոյ մէջ գտնուող լիճ մը կը պարունակէ ամբողջ աշխարհի անուշ ջուրերուն մէկ հիկզերորդը:
- * Աշխարհի ամենէն երկար վագրի մրցումին ժամանակ մարզիկները, 52 օրուան ընթացքին, օրական մօտաւորապէս 97 քմ. կը վազէին:

ՀԱՆԵԼՈՒԿ

Սիրելիս եմ ամէն տան,
Մանուկներուն՝ բարեկամ:
Մուշտակս՝ տաք ու քնքուշ,
Ես՝ մուկերուն աչքին փուշ:

(ԴԱՄՈՒԿ)

ԿԱՆԱԶ ԳՈՐՏԻԿՆԵՐԸ

Երկու պզտիկ գորտիկ եղբայրներ կ'ապրեին կանաչ հովիտի մը մեջ:

Անոնք բնաւ չէին սիրեր կանաչ գոյնը: Ինչպէ՞ս սիրեին:

Անտառը կանաչ էր՝, խոտերը՝ կանաչ, ջուրը՝ կանաչ, նոյնիսկ իրենց հագուստները կանաչ:

Միշտ կը գանգատէին, որ կանաչ աշխարհի մը մեջ կորսուած են, հետեւաբար կ'ատէին այդ գոյնը:

- Այս կանաչ հագուստը բնաւ չեմ սիրեր,- կ'ըսէր մեծ եղբայրը: Պզտիկ եղբայրը կը պատասխանէր.

- Ես ալ, բայց ի՞նչ ընենք, ուրիշ հագուստ չունինք:

Օր մը, գորտիկները որոշեցին երեկոյթ մը կազմակերպել եւ հրաւիրել անտառի բոլոր բնակիչները, որոնք կարմիր զգեստներ կը հագնէին:

Հրաւիրագրերը պատրաստեցին եւ կախեցին անտառին չորս կողմի ծառերուն վրայ:

Երեց գորտիկը բնաւ չսիրեց այս գաղափարը:

- Փորձա՛նք պիտի հանէք,- ըսաւ ան, գորտ եղբայրները զգուշացնելու համար:

Երեկոյթին նախ փայտփորիկը եկաւ: Ան գլխուն կարմիր գլխարկ մը ունէր: Յետոյ գատկաճճիի ընտանիքը եւ կարմրալանջ եղբայրները եկան: Եւ վերջապէս, պիծակները բզզալով ժամանեցին: Պիծակներն ալ կարմիր գիծեր ունէին իրենց կռակներուն վրայ:

Ամէն ինչ լաւ կ'ընթանար: Իրիկուան դեմ արագիլն ալ եկաւ եւ դրան գանգակը հնչեցուց:

- Իմ սրունքներն ալ կարմիր են: Ես ալ երեկոյթին կ'ուզեմ մասնակցիլ, պարել եւ բաներ մը ուտել,- ըսաւ:

Գորտերը երբ արագիլը տեսան, շուտով լիճ ցատկեցին եւ անհետացան: Արագիլը չտեսաւ գորտերը: Անշուշտ երեկոյթն ալ վերջացաւ:

Եկուր տե՛ս, որ գորտ եղբայրները կարմիր գոյնը սիրելէն երբեք չդադրեցան: Կարմիր գլխարկներ կարեցին եւ սկսան գանոնք գործածել:

Գլխարկները այնքա՛ն գեղեցիկ էին, որ նոյնիսկ շատ հեռուներէն կը տեսնուէին: Գորտիկները կարմիր գլխարկներով հպարտօրէն կը պտտէին անտառին մեջ:

Օր մը երբ արագիլը թառած էր ճիւղի մը վրայ, հեռուն ցատկոտող երկու կարմիր բաներ տեսաւ:

«Երթա՛մ, մօտէն տեսնեմ», մտածեց եւ թռա՛ւ ու մօտեցաւ այդ կարմիր բաներուն:

Տեսաւ երկու կարմիր գլխարկներ եւ անոնց տակն ալ երկու անուշիկ գորտիկներ: Սկսաւ հալածել գանոնք: Գորտիկները աջ ու ձախ վազվզեցին, ցատկոտեցին եւ շանացին ազատիլ արագիլին ճանկերէն:

Ամէն բան փորձեցին, բայց ի գուր:

Յանկարծ երեց գորտին ձայնը լսուեցաւ.

- Հանեցէ՛ք ձեր կարմիր գլխարկները: Այդ կարմիր գլխարկներուն պատճառով արագիլը կը հետապնդէ ձեզ,- ըսաւ:

Գորտիկները անմիջապէս հանեցին ու նետեցին իրենց կարմիր գլխարկները եւ փրկուեցան արագիլին հալածանքէն:

Անոնք հասկցան, որ թշնամիներէն պաշտպանուելու համար իրենց մեծագոյն զենքը կանաչ գոյնն էր:

Այդ օրէն ի վեր սկսան շատ սիրել կանաչ գոյնը:





Ուժեր



Ոչ մեկ կայուն առարկայ կը շարժի, եթե մեկը զայն չիրէ կամ չքաշէ: Ուժը այն է, որ կը բանեցնենք, երբ առարկայ մը վերցնենք, հրենք, քաշենք կամ անոր վրայ ճնշենք:
 Ուժ մը կրնայ առարկայի մը ձեւը փոխել կամ զայն տեղէն շարժել:

Ձգողականութեան Ուժը

Տիեզերագնաց մը, որ երկրի վրայ 72 քիլօ կը կշռէ, լուսնին վրայ միայն 12 քիլօ պիտի կշռէր, որովհետեւ երկրին ձգողականութեան ուժը վեց անգամ անելի է, քան՝ լուսնինը: Ձգողականութեան ուժը անտեսանելի է: Եթէ գնդակ մը նետես օդին մէջ, չի թռիր, այլ վերստին գետին կ'իյնայ, որովհետեւ երկրին ձգողականութեան ուժը զայն դէպի վար կը քաշէ: Առարկայ մը անշարժ կը մնայ այնքան ատեն, որ ուժ մը բանի իր վրայ:

